Արձանագրություն 02 /բացման արձանագրություն/

«ՀՀՇՄԳՀՀՀ-ԳՀԾՁԲ-23/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Գյումրի                                        11 մայիսի, 2021թ., ժ 11:00, ք. Գյումրի, Վարդանանց հրապարակ 1, Գյումրու համայնքապետարան

Մասնակցում են՝
Հանձնաժողովի նախագահ՝          Ա. Բաղդասարյան – Գյումրու համայնքի ղեկավարի խորհրդական,
Հանձնաժողովի անդամներ՝

Մ. Մկրտչյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի տեղակալ,
Տ. Ղազարյան– Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և շրջակա միջավայրի բաժնի գլխավոր մասնագետ,
Հ. Աբրահամյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ,
Օ. Գևորգյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ,

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ.

1. «ՀՀՇՄԳՀՀՀ-ԳՀԾՁԲ-23/21» ծածկագրով գնանշման հարցման գնումների միջոցով առաջարկների բացման փուլի, գնային առաջարկների ներկայացման, գնահատման, արդյունքների հաստատման /ծրարների արդյունքների ամփոփման/ մասին

1. Լսեցին և որոշեցին, որ՝

1.1 Գնային առաջարկ ներկայացնելու մասին 28.04.2021թ. էլեկտրոնային եղանակով ընթացակարգի հրավերի տեքստը միաժամանակ հրապարակվել է www.gnumner.am և www.armeps.am ինտերնետային կայքերում:

1.2 Գյումրի համայնքի կարիքների համար Գյումրի քաղաքի Սայաթ-Նովա փողոց 5ա հասցեի բազմաբնակարանային շենքի հիմնանորոգման և ամրացման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման,ծախսերի գնահատման և փորձաքննության եզրակացության տրամադրման ծառայությունների ձեռքբերման համար «ՀՀՇՄԳՀՀՀ-ԳՀԾՁԲ-23/21» ծածկագրով գնանշման հարցման գնումների համաձայն գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Մասնակիցը | Հասցե |
| --- | --- |
| «ԱՍԼԿ» ՍՊԸ | Ք. Գյումրի, Տիգրան Մեծի 1 |
| «Կոֆիս Նախագծային Ինստիտուտ» ՓԲԸ | Ք. Երևան, Խորենացի 33 |

1.3 Գնային առաջարկ պարունակող հայտերը բացվել են www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով:

1.4 Տվյալներ հայտերի ներկայացման՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.

- Գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացրած հայտը կազմվել և ուղարկվել է հրավերի պահանջներին համապատասխան:

1.5 Տվյալներ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

- Գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը ներկայացրել է գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, գնի առաջարկ:

Քվեարկվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

1.6. Մասնակիցների առաջարկած գները

| Հ/հ | Անվանումը | «ՄԱԼԿ» ՍՊԸ | | «Վոլիոս Նախագծային ինստիտուտ» ՓԲԸ | | Գնման հայտով նախատեսված գումար /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|---|
| | | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ | |
| 1. | Գյումրի քաղաքի Սայաթ-Նովա փողոց 5ա հասցեի բազմաբնակարան շենքի հետազննական և ամրացման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման, ծախսերի գնահատման և փորձաքննության եզրակացության տրամադրման ծառայություններ | **7 500 000** | 7 500 000 | **10 360 000** | 12 432 000 | **1 000 000** |

Հանձնաժողովը արձանագրեց, որ

- Նախնական ամփոփման արդյունքում նվազագույն գնային առաջարկ է ներկայացրել ***«ՄԱԼԿ» ՍՊԸ-ն***, սակայն երկու մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են Պատվիրատուի մոտ առկա նախահաշվային գինը:
- Քանի որ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ:
- Բանակցությունների վերջնաժամկետ էր սահմանվել 2021թ մայիսի 10-ը, ժամը 11:30, ք. Գյումրի, Վարդանանց հր. 1, Գյումրու քաղաքապետարան, սակայն մասնակիցներից ոչ մեկ չներկայացան բանակցության նիստին, իսկ մինչ բանակցության նիստը էլեկտրոնային փոստի հասցեին ծանուցում է ուղարկել «ՄԱԼԿ» ՍՊԸ-ն այն մասին, որ գնային նվազեցում չի կատարում:
- Գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ գնման հայտերից ոչ մեկը չի համապատասխանում գնման պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

Հանձնաժողովի նախագահ՝ ---------------------------- Ա. Բալաբեկյան (ԳՊ/ԳԱՊ)

Անդամներ՝

---------------------------- Մ. Մկրտչյան (ԳՊ/ԳԱ)

---------------------------- Տ. Ղազարյան (ԳՊ/ԳԱ)

---------------------------- Հ. Աբիսողոմյան (ԳՊ/ԲԱ)

---------------------------- Օ. Գևորգյան (ԳՊ/ԲԱ)

Քարտուղար՝ ---------------------------- Ա. Սարգսյան (ԳՊ/ՄՀՎ)